

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ՓՎ/17-2022

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ ԺԱՄԸ 11:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐ-ՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋ-ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏ-ՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐ-ԳԱՅՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱ-ՆԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

- | | |
|-----------------|--|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Ս. Թովմասյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Լ. Հովհաննիսյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Բ. Բադալյան | ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Ե. Կիրակոսյան | ՀՀ վարչապետի աշխատակազմի ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ |
| Ա. Մեյմարյան | ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Վ. Դավթյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի ղեկավար |
| Ն. Պետրոսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական |
| Լ. Մարտիրոսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղար |

Գ. Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ - ծրագրի ղեկավար
Ն. Զուլալյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ծրագրերի կառավարման և գնումների դեպարտամենտի պետ
Փ. Դարբինյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի ռեֆերենտ
Հրավիրվածներ՝	
Պ. Օրսինի	«Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության գործադիր տնօրեն
Ֆ. Բուռնոմո	«Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության գործառնական ղեկավար
Տ. Մեսրոպյան	«Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության ՀՀ-ի ներկայացուցչության կառավարիչ
Ա. Բոնչի	«Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության թիմի ղեկավարի տեղակալ
Ս. Գինոսյան	«Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) ընկերության թարգմանչուհի

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի՝ Քաջարան-Ագարակ, Քաջարանի թունելի կառուցման ներդրումային ծրագրերի մասին

(Նարեկ Ջուլայան, Պաոլո Օրսինի, Անդրեա Բոնչի, Քրիստինե Ղալեչյան,
Համբարձում Մաթևոսյան)

1" Ընդունելի գիտություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի՝ Քաջարան-Ագարակ, Քաջարանի թունելի կառուցման ներդրումային ծրագրերի վերաբերյալ զեկույցը:

2. Հավանություն տալ Ագարակ-Քաջարան 32 կմ ճանապարհի վերակառուցման և 7 կմ թունելի մանրամասն նախագծին:

3. Ընդունելի գիտություն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բադալյանի դիտարկումն այն մասին, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի շրջանակներում նախատեսված Քաջարանի թունելի կառուցման նախնական տեխնիկատնտեսական հետազոտության արդյունքներով կանխատեսված (թունելի երկարությունը շուրջ 4.7 կմ) և «Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության կողմից առաջարկվող Լոտ 2-ի նախագծում թունելի երկարության մասով առկա է էական տարբերություն (առաջարկվում է 7 կմ երկարությամբ թունելի կառուցում), ինչը ենթադրելու է ֆինանսական ծախսերի էական ավելացում:

4. Ընդունելի գիտություն «Այ Առ Դի Ինջենիրինգ» (Իտալիա) խորհրդատու ընկերության թիմի ղեկավարի տեղակալ Անդրեա Բոնչիի տեղեկացումն այն մասին, որ Քաջարանի թունելի կառուցման ծրագրի նախնական նախագծման փուլում ներկայացվել էր մի քանի տարբերակ: Առաջին տարբերակով նախագծված էր 4.5 կմ երկարությամբ թունելի կառուցում, 2-րդ տարբերակով՝ 5 կմ, իսկ 3-րդ տարբերակով՝ 6.5 կմ, որը հետագայում վերանայվել և դարձել է 7 կմ: Տեխնիկատնտեսական տեսանկյունից նախընտրելին համարվել էր 3-րդ տարբերակը, քանի որ կատարվել էին բազմաթիվ հետազոտություններ, հաշվի էին առնվել թունելի և նրա մուտքերի տեղադիրքերը: Քաջարանի թունելի կառուցման նախագծի փոփոխությունները կատարվել են 2019 թվականին՝ նախագծման նախնական փուլում՝ առաջին վեց ամսվա

ընթացքում, որի արդյունքում առաջադրված տարբերակները ներկայացվել են կառավարման խորհրդին:

4. Ընդունել ի գիտություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեշյանի տեղեկացումն այն մասին, որ Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի և Քաջարանի թունելի կառուցման ծրագրի նախնական նախագծման սկզբնական փուլերում դոնոր կազմակերպության մասնագետների հետ համատեղ դիտարկվել են հնարավոր բոլոր տարբերակները (տեխնիկապես տարբեր լուծումներով) և ղեկավարվել նախագծող կազմակերպության կողմից ներկայացված օպտիմալ նախագծային լուծումների առաջարկներով:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) վերանայված գնումների պլանը հաստատելու մասին

(Քրիստինե Ղալեշյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) վերանայված գնումների պլանը:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) վերանայված գնումների պլանից ենթադրվող ընթացիկ հարցերը սահմանված կարգով շրջանառել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի անդամներին, իսկ ծախսային հոդվածները և դրանցում կատարվելիք փոփոխությունները համաձայնեցնել ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝

1) ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի հետ հանգամանալից ուսումնասիրել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 2) իրականացման գործընթացում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և «Կորսան-Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի գծով ծագած իրավական վեճերի շրջանակներում ՄԱՄԱԻՀ (UNCITRAL) կանոնների ներքո հարուցված արբիտրաժային գործերի ներկայիս ընթացքը, դիտարկել խնդրի հանգուցալուծմանն ուղղված լրացուցիչ գործողությունների ու ժամկետների հնարավոր տարբերակները և արդյունքը զեկուցել ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին:

2) Ելնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) իրականացման հետ կապված ընթացիկ հարցերի հրատապության աստիճանից՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի հաստատմանը հարցերը ներկայացնել գրավոր ընթացակարգով:

2. ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի ղեկավար Վահե Դավթյանին՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բադալյանի առաջարկությունը՝ առաջիկայում ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մոտ կազմակերպել լրացուցիչ քննարկում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 2) իրականացման գործընթացում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և «Կորսան-Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի գծով ծագած իրավական վեճերի արբիտրաժային գործընթացի հետ կապված հարցերի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ